ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՄԵԾ ՏԱՐԻՆ.

Այս տարի մարդ մի առանձին հրճուանքով է հեռևում հայ մամուլին. բազմաթիւ հաստատութիւններ, հասարակական հիմնարկութիւններ, դրականութեան և մտաւոր կեանքի ալեհեր գլուխներ այս տարի մի յատուկ յուզումով և հպարտութեամբ կարող են յետ նայել ու իրանց անցեալ կեանքի վրայ մի հայեացք ձգելով մխիթարուած զգալ, որ բոլորել են տարիների մի որոշ թիւ, հանդէս են բերել մեր հասարակական–ազգային կեանքի մէջ որոշ շարժում, կեանք. նպաստել են կուլտուրական կեանքի ծաւալմանն ու բարգաւաճմանը։ Այս տարի տօնուելու են, կամ խօսում են տօնելու համար, մի շարք յօբելեաններ քսանհինգամեայ, երեսնամեայ, քառասնամեայ, յիսնամեայ, հարիւրամեայ, երկուհարիւրամեայ...

Ուրախալի երևոյթ է դա, որովհետև այդ փաստը ցոյց է տալիս, որ մեր նոր կուլտուրական կեանքի, մեր մտաւոր ու հասարակական շարժման նոր շրջանի հիմքերը արդէն պատկառելի հասակ են բոլորում, արդէն նահապետանում են, հնանում. դրա հետ միասին հաստատուն և կայուն դառնում. նշանակում է, որ այդ հաստատութիւններն ու հիմնարկութիւնները, մեր մտաւոր կուլտուրական կեանքի այդ երակները ուռճացել են ու յորդացել—ժամանակի և տարածութեան մէջ ընդարձակուել ու զարգացել. նշանակում է, որ մեր դրականութեան և մտաւոր կեանքի հսկայ ծառը պարզելով իւր գագաթները դէպի ներկայ դարի լուսաւոր ու պայծառ երկնակամարը, միևնոյն ժամանակ իւր արմատները թաղում է տասնեակ ու հարիւրաւոր տարիների հնութեան մէջ։

Այդ մանր ու խոշոր յոբելեանների մէջ կայ սակայն մէկը, որ իւր պատկառելի հասակով ու ալեզարդ տեսքով, իւր հասարակական նշանակութեամբ ու մեր բովանդակ ազգային կեանքին հաղորդած իւր կենսատու լոյսով այսօր կենդրոնական տեղ է գրաւում և արժանի է իւրաքանչիւր հայ մարդու յատուկ ուշադրութեան և համազգային խորհրդածութեան լուրջ առարկայ դառնալու։ Դա Հայկական տպագրութեան չորսհարիւրամեակն է։

Արդէն «Արարատի» նախկին համարի մէջ մենք մի քանի ընդհանուր գծերով բացատրեցինք այդ կարևորագոյն յոբելեանի հասարակական համազգային բնոյթը և լոյս յայտնեցինք, որ այդ յոբելեանը հետզհետէ գտնի իւր իրագործման ցանկալի ձևերը։ Այժմ ուրախութեամբ ենք արձանագրում, որ նա մեր մամուլի քննութեան և խորհրդածութեան լուրջ առարկան է արդէն։ Եղել են բազմաթիւ առաջարկներ յոբելեանն այս կամ այն կերպ տօնելու. գրւում են յօդուածներ և արտայայտւում ցանկութիւններ որ և է կերպ յաւերժացնելու Հայկական տպագրութեան չորսհարիւրամեակի մեծ տօնը. կազմուել են յոբելեանական յանձնաժողովներ անմիջապէս ձեռնարկելու տօնակատարութեան պատրաստութիւններին. մի քանի տեղերում, ինչպէս օրինակ Բագւում, որոշուել է նոյն իսկ հանդիսի օրը։

Մենք միտք չունենք ամենևին քննադատել այստեղ այդ առաջարկներն ու ցանկութիւններ. յայտնում ենք այդ առթիւ միայն խնդակցութիւն, որ խնդիրն արդէն սկսուել է իրօք որ կենդրոնական տեղ գրաւել մեր մամուլի մի քանի օրգաններում։ Մի հանգամանք միայն կուզէինք յատկապէս շեշտած լինել։ Հայկական տպագրութեան չորսհարիւրամեակը պարզ է, որ համազգային տօն է ու վերաբերում է հայ լաւագոյն մտքի ու սրտի չորսհարիւր տարուայ կեանքին. նա հաւասարապէս վերաբերում է մեզ՝ Կովկասահայերիս, ինչպէս նաև Տաճկաստանի հայութեան և բոլոր Հայկական գաղութներին. յոբելեանը պատկանում է ամբողջ ազգին, յոբելեարը ինքը բովանդակ հայ ազգն է։

Ու այդ նշանաւոր ու հազուագիւտ ոգնին մասնակցելու են Հայկական բոլոր գաղութներն ու կենդրոնավայրերը. ամբողջ ազգը իւր բոլոր հատուածներով պէտք է կազմակերպուած ու գիտակցօրէն մասնակցի այդ մեծ հանդիսին։

Ըստ ինքեան հասկանալի է, որ դրա համար հարկաւոր է նախապէս լայն և ընդարձակ կազմակերպութիւն, նախապատրաստական մեծ աշխատանք։ Կովկասի Հայոց հրատարակչական ընկերութիւնը մի նախանձելի և գեղեցիկ նախաձեռնութեամբ սկսել է արդէն նաև կազմակերպման գործը։ Այդ ընկերութեան հրաւէրով հաւաքուած ժողովների մէջ յանձնաժողով է ընտրած, կազմակերպման գործն աւելի հաստատուն հիմքերի վրայ դնելու համար։ Մեծ յոբելեանը յաւերժացնելու համար որոշուել է հրատարակել տպագրութեան պատմութիւնը, կազմել գրքերի ցուցահանդէս, կազմակերպել դասախօսութիւններ հայ կեանքի մէջ յոբելեանի նշանակութիւնն ու դերը պարզելու համար, հաստատել գրական ֆոնդ և այլն։ Յանձնաժողով կազմուել է նաև Բազում–ոգնակատարութեան տեղական ծրագրով։

Մեզ համար սակայն այժմ կարևոր խնդիրն այն է, թէ ինչպէս պէտք է այդ մասնաւոր, հատ հատ յանձնաժողովներն ու ցանկութիւնները ձուլուին ի մի ընդհանուր համազգային գործ, այդ մեծ յոբելեանի ոգնակատարութիւնն ինչպէս պէտք է համազգային դարձնել։ Պարզ է, որ մամուլի, դասախօսութիւնների, բրոշիւրների միջոցով լի ու լի կարելի է պարզել, լուսաբանել Հայկական տպագրութեան ամբողջ դերն ու նշանակութիւնը. պարզ է, որ այդ յոբելեանի լուրն ու նշանակութիւնը մամուլի միջոցով կարելի է հասցնել մեր Հայկական իրականութեան ամենախուլ անկիւնները, ամենայեռ ընկած վայրերն ու նոյն իսկ դառամեաններին բացատրել ու հասկացնել, թէ դպրոց գնացող նրանց թոռնիկներն ու որդիները ինչ բարիք են վայելում այսօր։ Կասկած չկայ, որ մի փոքր աւելի կազմակերպուած և ինտենսիւ պրոպագանդան այդ ար-

գիտնականներին կը հասանէ։ Բայց գործի դա միայն կէսն է, թէև կարևոր կէսը։ Այնուհետև հարկ է մի մարմնի մէջ ձուլել միացնել բազմաթիւ ցանկութիւններ և առաջարկներ, որոնք գալիս են տարբեր հաստատութիւններից և յանձնաժողովներից, առանձին անհատներից և խմբերից. հարկաւոր է մի կենդրոնական մարմին, որ յարաբերութեան մէջ մտնի և հնարաւորութիւն և յարմարութիւն ունենայ ազատօրէն բանակցելու հայութեան միւս կէսի՝ Տաճկաստանի հետ. նոյնպիսի յարմարութեամբ և հեշտութեամբ բանակցել կարողանայ նաև մեր միւս գաղութների հետ և հետզհետէ խնդիրը պարզելով, ցանկութիւններն ու առաջարկները մշակելով գործադրէ հայ հասարակութեան արտայայտած լաւագոյն ցանկութիւնները՝ Հայկական այս նշանաւոր յոբելեանը յաւերժացնելու առթիւ։

Անտես չառնելով այն մեծ կարևորութիւնը և ազգային ինքնագիտակցութեան տեսակէտից շատ բարձր գնահատելով մինչև այժմ ընտրուած յանձնաժողովներն ու նրանց մշակած ծրագրերը, մենք կարծում ենք, որ այդ մասնաւոր մարմինները բաւարար չեն այդպիսի մի համազգային տօն կատարելու և կազմակերպելու համար։ Նրանք չունին դրա համար անհրաժեշտ դիւրութիւնն ու յարմարութիւնը, չունին հայութեան բազմաթիւ հատուածների հետ հեղինակաւոր յարաբերութեան մէջ մտնելու նախապայմանները։ —Բացի դրանից, խօսում է գրական-դպրոցական ֆոնդ կազմակերպելու մասին. ցանկութիւններ են յայտնում, որ ի յիշատակ Հայկական տպագրութեան այդ բազմադարեայ յոբելեանի, ապահովենք մեր դպրոցները, ստեղծելով նրանց համար աւելի բարեկեցիկ վիճակ։ Եթէ ընդունենք, որ այդ ցանկութիւնները կամ դրանց նման առաջարկները համազգային դառնան ու հրամայողաբար իրանց իրագործումը պահանջեն, հարցնում ենք. ինչպէս, տեխնիկական ինչ ճանապարհով պիտի իրականութիւն դառնին, ուրիշ խօսքով ո՞վ է նրանց իրականացնողը, ո՞ւմ միջոցով, ո՞ր հաստատութեան։—Ապա կարող էինք յիշել նաև տօնակատարութեան ժամանակի մասին. որ դա լիներ

միատեսակ, ըստ կարելւոյն նշանակուէր մի օր, երբ մեր բոլոր Հայկական հաստատութիւնները տօնաւոր լինէին, միևնոյն օրում տօնէին այդ համազգային հանդէսը։ Հասկանալի է ըստ ինքեան, որ այդ գործում մեծագոյն մասնակցութիւն կարող էին մեր դպրոցներն ու ուսուցիչները ցոյց տալ։ Պարզ է, որ կարելի էր մեր բոլոր դպրոցներին կարգադրել—թէ մեզանում և թէ Տաճկաստանում ու դաղութներում—որոշեալ միևնոյն օրը կատարել այդ մեծ հանդէսը։

Այս բոլորը խնդիրներ են, որոնց լուսաբանութեան, պարզաբանման և քննադատութեան համար ամեն տեսակի մասնաւոր յանձնաժողովներն ու խորհրդածութիւնները օգտակար են և կարևոր, որոնց իրագործման համար սակայն այդ մասնաւոր յանձնաժողովները անբաւարար են, ուստի և անյարմար։ Հարկաւոր է, որ գործի գլուխ անցնի մի համազգային հաստատութիւն, որ օժտուած լինի հայի բոլոր հատուածների հետ հեշտ և հեղինակաւոր յարաբերութեան մէջ մտնելու բոլոր տուեալներով, որի իրաւասութեանը և պաշտօնական տեսչութեանը ենթարկուէին մեր ազգային հաստատութիւնները, գլխաւորապէս մեր դպրոցները։ Անցեալներում մենք պատահեցինք մեր մամուլի մէջ այսպիսի տողերի. «Համահաւասար ջերմ վերաբերմունք պէտք է ցոյց տան դէպի այդ մեծ յոբելեանը Հայութեան բոլոր հատուածները անխտիր։ Անհրաժեշտ է, որ ամեն տեղ էլ հայկական կենդրոնները խանդավառութիւնով դիմեն առաջիկայ մեծ տօնին, համախմբուին ներ անեն գործադիր մարմիններ ընտրեն, գործունէութեան ծրագիր մշակեն—տեղի և պայմանների համեմատ»։— Ինչ խօսք, որ դա ցանկալի է ու անհրաժեշտ. ինչ կասկած, որ տեղի և պայմանների համեմատ իւրաքանչիւր գաւառ, քաղաք և աւան լաւ կը լինի և պէտք է որ մասնակցէ այդ մեծ յոբելեանին։ Այնպիսի խնդիրներ, ինչպէս օրինակ Բագուի յոբելեանական ընդհանուր ժողովն է որոշել, որ յոբելեանական հանդէսն ունենայ գրական երաժշտական և զուարճական մասեր, որ այնտեղ այս կամ

այն ոտանաւորներն ու բանախօսութիւններն արտասանուեն — ի հարկէ դրանք և դրանց նման այլ բազմաթիւ խնդիրներ կարող են և պէտք է լինին տեղական մասնաւոր յանձնաժողովների գործունէութեան կէտեր։ Նրանց գործունէութեան մէջ կարող են և պէտք է մտնեն նաև աւելի ընդհանուր բնաւորութիւն կրող խնդիրներ — օրինակ ինչ չափով տեղական միութիւնները, քաղաքներն ու աւանները մասնակցել կարող են այն համազգային ձեռնարկութիւններին, որոնց իրագործման համար հարկաւոր կը լինեն անշուշտ մեծամեծ գումարներ։ Բացի այդ, տեղական այդ ընդհանուր ժողովներն ու մասնաժողովները կենդանի խորհրդածութեան նիւթ կարող են շինել նաև այն, թէ ինչպիսի մեծ, ընդարձակ ձեռնարկութիւններ ու Հայկական տպագրութեան յիշատակն յաւերժացնելու կոթողներ կարելի է կանգնել այդ մեծ յոբելեանի համար։

Սակայն այդ բոլորից յետոյ դարձեալ մնում է բաց գլխաւոր հարցերից թերևս ամենից գլխաւորը. որը պէտք է լինի այն մարմինը, որ ի մի ձուլէ այդ բոլոր լաւագոյն ցանկութիւնները, որոշումները՝ առաջարկներն ու ծրագիրները և դրանց իրագործման ճանապարհի վրայ բերէ։ Մէջ տեղը մի ընդհանուր համազգային մարմին պէտք է լինի, որ հնարաւորութիւն ունենայ հայութեան բոլոր գաղութներում երևան եկած այս տաք վերաբերմունքից օգտուի ու այդ պանծալի յոբելեանին տայ համազգային ձև։ Իւրաքանչիւր յանձնաժողով և ընկերութիւն, ինչքան էլ որ նա պատկառելի ու հեղինակաւոր լինի — մեր ամբողջ հայութեան կենդրոնավայրերի և գաղութների համար մասնաւոր բնոյթ ունի։ Այդպիսի մարմին ներկայ պայմանների մէջ մեր կարծիքով Ամենայն Հայոց Հայրապետութիւնն է։

Սուրբ Էջմիածինը կարող է հանդիսանալ հայութեան զանազան գաղութների և հատուածների համար ամենաշօշափելի կապը և նրա միջոցով թերևս աւելի հեշտ ու հնարաւոր լինի Հայկական տպագրութեան այս դարաւոր յոբելեանը համազգային դարձնել։ Մեզ թւում է, որ ամենից հեշտ ու յարմար կերպով Ամենայն Հայոց Կաթուղի-

կոսի բարձր հովանաւորութեան տակ կազմուած յանձնաժողովը ամենից շատ յարմարութիւն և դիւրութիւն կունենայ կենդանի, արագ և իրական յարաբերութեան մէջ մտնել Ցաճկահայերի թէ Պատրիարքարանի և թէ Ազգային ժողովի հետ, ինչպէս նաև գաղութների տեղական ժողովների և պաշտօնական մարմինների հետ ու հետևելով նաև Կովկասահայ ցանկութիւնների և առաջարկների ընթացքին —այդ բոլորից մշակի մի ընդհանուր ծրագիր, թէ ինչ պէտք է ազգը հանդէս բերի այդ տօնի առթիւ, արդեօք համազգային յոբելեանը ինչով պէտք է համազգային դառնայ. նրանով միայն, որ ամբողջ ազգը պէտք է տօնէ որ և է մի օր, հանդէսներ կազմէ և ճառեր արտասանէ, թէ առաջ են գալու նաև հասարակական–համազգային ընդհանուր բնաւորութիւն ունեցող ձեռնարկութիւններ, որոնք ունենալու են տևական և կայուն բնոյթ, արժանի այդ հազուադիւտ յոբելեանին։

Խօսւում է դպրոցական կամ գրական ֆոնդի մասին. պարզ է, որ մեր բոլոր դպրոցների հետ գործ ունեցող հիմնարկութիւն կարող է լինել միմիայն այն բարձր հաստատութիւնը, որի իրաւասութեանն են ենթարկւում այդ դպրոցները։ Կասկած չկայ, որ մեր դպրոցները շատ մեծ և կենդանի մասնակցութիւն են ցոյց տալու այս գործում. թերևս շատ տեղերում Հայոց դպրոցական դահլիճներում կամ դպրոցական մարմնի ղեկավարութեամբ էլ տօնուին այդ հանդէսները. ինչ խօսք, որ այս դէպքում ևս հարկաւոր կը լինի տօնին միօրինակութիւն և կարևորութիւն տալու համար միևնոյն օրում կատարել տալ այդ մեծ հանդէսը, դարձնելով այդ օրը այնուհետև իւրաքանչիւր տարի տօնելի. մենք շատ չունինք այդպիսի համազգային օրեր։

Մեր ասածներից պարզ է, որ Հայկական տպագրութեան յոբելեանի առթիւ լինելիք ձեռնարկութիւնների նկատմամբ մենք որևէ առաջարկ չենք անում և ոչ էլ եղածներից որևէ մէկը քննադատում ենք. մենք միայն մի քանի ընդհանուր գծերով քննութեան առանք յոբելեանը

համազգային դարձնելու հնարաւոր պայմանները և որոշեցինք նրա մօտաւոր ընդհանուր ձևերը։ Ամփոփելով այդ առթիւ արտայայտած մեր մտքերն ասենք. Հայկական տպագրութեան չորսհարիւրամեայ տօնը իրօք համազգային դարձնելու և ազգի զանազան հատուածների մէջ երևան եկած ցանկութիւններն ու առաջարկները համախմբելու, մշակելու, ինչպէս նաև ազգի զանազան մասերի հետ հեղինակաւոր յարաբերութեան մէջ մտնելու և համազգային կոթողներով տօնն յաւերժացնելու համար անհրաժեշտ է, որ Ամենայն Հայոց Հայրապետն իւր բարձր հովանաւորութեան տակ առնէ յոբելեանը, անհրաժեշտ է, որ մի կենդրոնական յանձնաժողով կազմուի Կաթուղիկոսի հովանաւորութեան տակ, որն այնուհետև օժտուած կը լինի հայութեան միւս դաղութների հետ յարաբերութեան մէջ մտնելու բոլոր ցանկալի նախապայմաններով և կը գործէ այդ բարձր հեղինակութեան անունից։ Համազգային տօնին համազգային բովանդակութեան հետ պէտք է տալ նաև համազգային ձև։

Գ. Ալթունեան.

5 մարտի.